



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՍԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Շիրակի մարզ գ. Բասեն  
փողոց 1<sup>ր</sup> թիվ 1 ՀՀ 095 365600  
<<17>> Հունիս 2016թ.

N 37

ՀՀ Շիրակի մարզպետ  
պարոն՝ Հ. Միմոնյան

**Հարգելի պարոն Միմոնյան**

Զեզ ենք ներկայացնում ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնքի ավագանու 2016 թվականի Մայիսի 03-ի թիվ 12-Ն, 13-Ն և 14-Ն որոշումները:

Հարգանքներով

/ Բասեն համայնքի դեկանար՝

Հ. Պետրոսյան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնք,

### ՈՐՈՇՈՒՄ

« 03 Մայիս 2016 թվականի N 12-Ն

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՂԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավագումն մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով՝

**Բասեն համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքի ղեկավարին կը խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

#### **ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՇԽԱՄՆԵՐԸ**

Ավագանու անդամներ՝

կողմ (4)

դեմ(օ)

ձեռնպահ (օ)

1. Փայլակ Անդրանիկ

*Փայլ*

2. Միհր Մնացյան

*Միհր*

3. Միհր Մարգարյան

*Միհր*

4. Մնացական Հերելյան

*Մնացակ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

03 Մայիս 2016 թվական





Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Բասեն համայնքի ավագանու  
«03» Մայիս 2016 թվականի  
N12-Ն որոշման

## ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

#### I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կարգով սահմանվում են են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ խորհրդակցական մարմինների) ձևավորման, դրանց գործունեության և այդ մարմիններին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները:
- Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի քնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների միջև:
- Սույն կարգի խնդիրներն են.
  - հստակեցնել խորհրդակցական մարմինների գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
  - սահմանել խորհրդակցական մարմինների քանակն ու անվանումները.
  - սահմանել խորհրդակցական մարմինների ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
  - հստակեցնել խորհրդակցական մարմինների գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
  - սահմանել այլ մարմինների հետ խորհրդակցական մարմինների հարաբերությունները.
  - սահմանել խորհրդակցական մարմունների գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման մոտեցումները:

#### II.ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհրդակցական մարմինները համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններ են, որոնց միջոցով ապահովում է համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարման ու գարգացմանը: Խորհրդակցական մարմինները, որում համայնքի բնակչությունը, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:
5. Խորհրդակցական մարմինների նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակչությունը, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը տեղական ինքնակառավարմանը:
6. Խորհրդակցական մարմինների խնդիրներն են.
- 1) Խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի գարգացման ուղղությունների վերաբերյալ:
  - 2) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչությունը, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը տեղական ինքնակառավարման մարմիններին:
  - 3) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ:
7. Խորհրդակցական մարմինները գործառույթներն են.
- 1) ապահովել համայնքի բնակչությունը իրազեկությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:
  - 2) աջակցել և մասնակցել համայնքի գարգացման քառամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, բնուարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, առողջության և գնահատման աշխատանքներին:
  - 3) եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ:
  - 4) վերհանել տվյալ ոլորտում հանրային կարևորություն և նախագծերի ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 5) ուսումնասիրել և բնարկել համայնքի բնակչությունը, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
  - 6) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ:

- 7) ապահովել հարթակ, մի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.
- 8) աջակցել համայնքում կոնֆիգուլների կանխարգելմանը, ծագած կոնֆիկուլների լուծմանը, նպաստել համայնքում առևա հակամարտությունների մեղմմանը.
- 9) հետևել ԽՄ-ների կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.
- 10) համագործակցել համայնքային աշխատանքային խմբերը և այլ մարմինների հետ.
- 11) առաջադրել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի թեկնածու:

### **III. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ**

8. Համայնքի ղեկավարին կից ծևավորվում և գործում են թվով երեք խորհրդակցական մարմիններ: Դրանք են.
  - 1) համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմիններ.
  - 2) քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջ սփառը ւաշտավանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմիններ.
  - 3) կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմիններ:

### **IV. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

9. Խորհրդակցական մարմինների ծևավորումը իրականացվում է հետևյալ կարգով.
  - 1) Խորհրդակցական մարմինները կարող են ունենալ մինչև 25 անդամ.
  - 2) Խորհրդակցական մարմինները ծևավորված են համարվում, եթե տվյալ խորհրդակցական մարմինների կազմում ընդգրկված է առնվազն հինգ անդամ.
  - 3) Խորհրդակցական մարմինները ունեն նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը խորհրդակցական մարմինների անդամ չեն:
10. Խորհրդակցական մարմինների կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.
  - 1) համայնքի ավագանու մեկից երեք անդամ.
  - 2) համայնքի աշխատակազմի կամ ուսմայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ.
  - 3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
  - 4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
  - 5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ.

- 6) համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների). հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոռպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և ընակավայրերի ներկայացուցիչներ:
- 7) փորձագետներ:
- 8) համայնքի ակտիվ բնակիչներ.
- 9) այլ շահագրգիռ անձիք:
11. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:
12. Խորհրդակցական մարմինները ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանուուրությունունում ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:
13. Խորհրդակցական մարմինները գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:
14. Նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում ձևավորվում են նոր կազմով ԴԱՀ-ներ:
15. Խորհրդակցական մարմինների անդամ չեն կարող լինել:
- 1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
- 2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեականարդարական հիմնարեններում.
- 3) զինված ուժերի ժամկետուային գրնժանությունները:
16. Խորհրդակցական մարմինների անդամների թեկնածուների ներկայացումը և հաստատումը կատարվում է հետևյալ կարգով.
- 1) Խորհրդակցական մարմինների անդամների թեկնածուներին, համայնքի ղեկավարի համապատասխան առաջարկության ներկայացմամբ, հաստատում է համայնքի ավագանին՝ համապատասխան որոշմամբ.
- 2) Խորհրդակցական մարմիններու անդամները տվյալ խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը.
- 3) համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նոր կազմով խորհրդակցական մարմինները ձևավորենի՛ խորհրդակցական մարմինների նախկին անդամներն իրենց համաձայնությամբ կարող են նորից ներկայացվել և ընդգրկվել խորհրդակցական մարմինների կազմում:
17. Խորհրդակցական մարմինները անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.
- 1) համայնքի ավագանուուրությունի անդամների առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի ռամաճայնությամբ).
- 2) համայնքի պարտականությունների մասնագետի թեկնածուն առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
- 3) Խորհրդակցական մարմինների մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է խորհրդակցական մարմիններ անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:
18. Խորհրդակցական մարմինների անդամների (բացառությամբ համայնքի ավագանուուրությունի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության

կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը նրբում է, սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը փակցվում է տեղական ինքնակառավարման նախավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի աշխատական ինտերնետային (համացանցային) կայրի առկայության դրայքում հայտարարությունը պարուադիր կերպով տեղադրվում է այդ կայրում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մաջ նշվում է, թե որ խորհրդակցական մարմիններին անդամակցելու համար է կատարվում հրավերը, ուզեր ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ծևը սահմանված է հավելված 1-ում:

19. Խորհրդակցական մարմինների անդամների (քացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքակետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունները մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի նորմից սաց է լացվում հրացագործոց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի դեկապարը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքակետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահուրը:

20. Խորհրդակցական մարմինների անդամների (քացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները:

- 1) թեկնածուներուն ցենզը.
- 2) հասայնքի բնակչության տարրեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.

3) հասարակական և նարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.

5) հարցագրույցի արդյունքները:

21. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընդգրկվել խորհրդակցական մարմիններից որևէ մեկի կուգայում, գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեգիստրում:

22. Խորհրդակցական մարմինների անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվի:

23. Խորհրդակցական մարմնի անդամի գործունեությունը դադարեցվում է, համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, համայնքի ավագանու որոշմամբ, եթե խորհրդակցական մարմնի անդամը:

- 1) դիմում է ներկայացրել տվյալ Խորհրդակցական մարմնի կազմից դուրս գալու վերաբերյալ;
- 2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանփակ գործունակ.
- 3) առկա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և նա իր պատիժը կրում է քրաքատարողական հիմնարկում.
- 4) զորակոչվել է ժամկետային գինձառայլության.
- 5) եթեր անգամ արդնդեց, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
- 6) մահացել է:

24. Եթե խորհրդակցական մարմնի անդամի գործունեության դադարեցման հետևանքով տվյալ խորհրդակցական մարմնի անդամների թիվը նվազել է հինգից, ապա խորհրդակցական մարմնի նոր մեջամի թերթածուն առաջարկում է դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:

25. Համայնքի ղեկավարը ավագանու առաջիկա նիստին առաջարկություն է ներկայացնում խորհրդակցական մարմնի նոր աշխատակազմի ռեկնածությունը հաստատելու վերաբերյալ:

26. Եթե տվյալ խորհրդակցական մարմնը անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել խորհրդակցական մարմնի:

27. Խորհրդակցական մարմնի նախագահը համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, խորհրդակցական մարմնների նախագահի գործառություններն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

28. Խորհրդակցական մարմնի բարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

#### Վ.ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

29. Խորհրդակցական մարմինների անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական հիմունքներով:

30. Խորհրդակցական մարմինների գործունեության տեղեկատվական և մասնագիտական լայնահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի բարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:

31. Համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի սենյակ, աշխատավայրից, գրասենյակային պարագաներ և այլն) խորհրդակցական մարմինների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար, ինչպես նաև խորհրդակցական մարմինների

գործունեությանը՝ հաշմանդամների, սակավաշարժ խմբերի, կարդալու և յեղու դժվարություններ ուղղող անձանց մասնակցությունն ապահովելու համար:

**32.Խորհրդակցական մարմինների նիստերը գումարվում են՝**

1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

2) անհրաժեշտության դեպքում. կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

**33.Նիստերը հրավիրում և վարում է խորհրդակցական մարմինների նախագահը:**

**34.Խորհրդակցական մարմնի նրանի անօաթիվը որոշում է խորհրդակցական մարմնի նախագահը:**

**35.Խորհրդակցական մարմնի առաջին նիստը գումարվում է տվյալ խորհրդակցական մարմնի կազմը հաստատուու մասին համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:**

**36.Խորհրդակցական մարմինները նիստերը պազմագերպվում և անց են կացվում տեղական ինքնակառավարման նստավայրում կամ համայնքի դեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:**

**37.Խորհրդակցական մարմնի նիստի վայրը, ամսաթիվը և ըննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նրանից առավազն երկու աշխատանքային օր առաջ: Նշալ տեղեկատվությունը ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են ռամայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:**

**38.Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում, վերոնշյալ տեղեկատվությունը ըստատիքի կերպով տեղադրվում է այլ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստառելեկտրանը և ժամանակակից հռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):**

**39.Խորհրդակցական մարմնի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են խորհրդակցական մարմնի անդամների բյի կեսից ավելին:**

**40.Եթե կես ժամից ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի հրավագորությունը, կամ նիստին չի ներկայանում խորհրդակցական մարմնի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են խորհրդակցական մարմնի նիստին ներկայացած անդամները:**

**41.Խորհրդակցական մարմնի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:**

**42.Խորհրդակցական մարմինների նիստերը դուրսաց են՝ խորհրդակցական մարմնի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:**

**43.Խորհրդակցական մարմնի անդամը խորհրդակցական մարմնի նախագահի կողմից կարող է հեռացվել խորհրդակցական մարմնի նիստից՝ նիստը աշխատանքները խոչընդունելու դեպքում:**

**44.Խորհրդակցական մարմնի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.**

**1) Խորհրդակցական մարմնի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի դեկավարը.**

- 2) Խորհրդակցական մարմնի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է տվյալ խորհրդակցական մարմնի քարտուղարն նիստից առնվազն որևէ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև խորհրդակցական մարմնի բոլոր անդամները:
- 3) Խորհրդակցական մարմնի նիստի օրակարգի նախագիծը, ըննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթյուրը խորհրդակցական մարմնի քարտուղարը ներկայացնում է խորհրդակցական մարմնի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:
45. Խորհրդակցական մարմնի նիստի օրակարգի նախագծում նշվում են.
- 1) Նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
  - 2) ըննարկման ենթակա հարցերը.
  - 3) ըննարկվող յուրաքանչյուր հարցի գեկուցողի անունը և ազգանունը:
46. Խորհրդակցական մարմնի նիստն սկսվում է խորհրդակցական մարմնի նիստի օրակարգի հաստիսումով՝ խորհրդակցական մարմնի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
47. Խորհրդակցական մարմինները կազմում և ընդունում են որոշումներ:
48. Խորհրդակցական մարմինների որոշումներն ընդունվում են խորհրդակցական մարմինների եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի դեկանալին:
49. Խորհրդակցական մարմնի որոշումը համայնքի դեկանալի համար կրում են խորհրդատվական բնույթ: Խորհրդակցական մարմինների որոշումների հիման վրա համայնքի դեկանալը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:
50. Խորհրդակցական մարմնի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է տվյալ խորհրդակցական մարմնի՝ տարեց անդամի ձայնը:
51. Խորհրդակցական մարմնի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
52. Խորհրդակցական մարմնի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:
53. Խորհրդակցական մարմնի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ. դեմ և ձեռնպահ բվեարձաւ խորհրդակցական մարմնի անդամների անունները և ազգանունները:
54. Խորհրդակցական մարմնի որոշումը ստորագրում են խորհրդակցական մարմնի նիստին ներկա անդամները:
55. Խորհրդակցական նիստին նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:
56. Խորհրդակցական մարմինների նիստերն արձանագրվում են խորհրդակցական մարմինների քարտուղարի կողմից:
57. Նիստի արձանագրությունը ներառում է.
- 1) Նիստի անցկացման վայրը և անսպի՛լը.
  - 2) Նիստին մասնաւուցած խորհրդակցական մարմնի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.
  - 3) Նիստի օրակարգը.
  - 4) ըննարկված հարցերի, գեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

- 5) ընդունված որոշումները, դրանց ներևացման և հրապարակման ձևերը.
- 6) ընդունված որոշումներին դեմ բվեարկածների հաստուկ կարծիքները(եթե այդպիսիք կան):
- 58.Նիստի արձանագրությանը կցվում են տվյալ խորհրդակցական մարմնի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լրանկարները, տեսանյութերը և այլն:
- 59.Խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրությունները ստորագրում է խորհրդակցական մարմինների քարտուղարը: Խորհրդակցական մարմինների նրանք արձանագրությունները ենթակա են հրապարակման:

## VI.ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

60. Խորհրդակցական մարմինները մշտական կապ են հաստատում և համագործակցում են համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հաւաքության, մասնավոր հալվածի կազմակերպությունները և խմբերը ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:
61. Խորհրդակցական մարմինները ողղակի կապ են հաստատում համայնքային աշխատանքային խմբերի հետ, որոնք կարող են ծևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեությամբ բնագավառների (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի ձևավորմամբ ընդունված բնակչակայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի խորհրդակցական մարմրների անդամները կարող են նախաձեռնել նման համայնքային աշխատանքային խմբերի ծևավորումը: Համայնքային աշխատանքային խմբերի ծևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասն տեղեկացնել այն խորհրդակցական մարմինն, որի գործունեության ոլորտին առնչվում են տվյալ համայնքային աշխատանքային խմբերի ծևավորումն նպատակները: Համայնքային աշխատանքային խմբերի սերմանությունը կազմը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և համապատասխան խորհրդակցական մարմնի հետ: Համայնքային աշխատանքային խմբերն իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի, ներկայացնում են նաև այն խորհրդակցական մարմնին, որին առնչվում են այդ արդյունքները: Խորհրդակցական մարմինները մերժուելու օգնությունը խորհրդատություն և տեխնիկական աջակցություն են տրամադրում համայնքային աշխատանքային խմբերին՝ նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

## VII.ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- 62.Համայնքում գործող խորհրդակցական մարմինների գործունեությունը դադարեցվում է.
- 1) եթե լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը,
  - 2) եթե սույն կարգուն փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են խորհրդակցական մարմինների բնակները և (կամ) անվանումները:

### **VIII. ԽՈՐՀԵԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԵՐԵԲԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԺԻՌԻՄԸ**

63. Խորհրդակցական մարմինների գործունեության առնչվող՝ համայնքի ավագանու գործառույթներն են.

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը,
- 2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ լիովինություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դաշտացնում է սույն կարգի գործողությունը,
- 3) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, հաստատում է խորհրդակցական մարմինների անդամներին,
- 4) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, դադարեցնում է խորհրդակցական մարմինների անդամների գործունեությունը,
- 5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ձանորդանում է խորհրդակցական մարմինների ուսումնասիրությունների և եզրակացությունների և առաջարկությունների հետ,
- 6) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, խորհրդակցական մարմինների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ,
- 7) կարող է համայնքի ղեկավարից սահմանվել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների գործունեության վերաբերյալ:

64. Խորհրդակցական մարմինների գործունեության առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.

- 1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինները ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ,
- 2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը,
- 3) ձևավորում է խորհրդակցական մարմինների անդամների ընտրության հանձնաժողով,
- 4) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու վերաբերյալ,
- 5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն խորհրդակցական մարմինների անդամների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ,
- 6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է խորհրդակցական մարմինների գործունեությունը,
- 7) անհրաժեշտ գումաններ է ստեղծում խորհրդակցական մարմինների՝ սույն կարգով նախառելսված գործունեության իրաւանագման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար,
- 8) հրավիրում և վարում է խորհրդակցական մարմինների նիստերը,
- 9) որոշում է խորհրդակցական մարմինների նիստերին հրավիրվող անձանց կազմը,
- 10) ձևավորում է խորհրդակցական մարմինների նիստերի օրականգերի նախագծերը,
- 11) ձևութեանում է խորհրդակցական մարմինների ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին,
- 12) խորհրդակցական մարմինների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ

- տուաշարկորյուններ է՝ ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
- 13) նախաձեռնում է համայնքային աշխատանքային խմբերի ծևավորումը.
- 14) համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ծևավորվող համայնքային աշխատանքային խմբերը հազի վերաբերյալ:
- 65.Համայնքի դժվարացնում բացակայության ժամանակ՝ համայնքի դեկավարին, որպես խորհրդակցական մարմնի նախագահի գործադրությունը է համայնքի դեկավարի տեղակալը:
66. Խորհրդակցական մարմինների գործունեության առնչվող՝ համայնքի աշխատակազմի քարտուղարի գործառույթներն են.
- 1) կազմակերպում է խորհրդակցական մարմինների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է խորհրդակցական մարմինների գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
- 2) իրականացնում է խորհրդակցական մարմնի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է խորհրդակցական մարմնի քարտուղարին:
- 67.Խորհրդակցական մարմնի քարտուղարի գործառույթներն են.
- 1) հարցելու և ընդունում խորհրդակցական մարմինների անդամներից խորհրդակցական մարմինների նիստերի օրակարգերը նախագծերու ընդգրկելու համար.
- 2) ապահովում է խորհրդակցական մարմինների կազմակերպաչ-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
- 3) ապահովում է խորհրդակցական մարմինների անդամների և նիստերին իրավիրված անձաւոց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և բնարկվող հարցերի մասըն.
- 4) վարում է խորհրդակցական մարմինների գործավարությունը.
- 5) կազմում և ստորագրում է խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրությունները.
- 6) ապահովում է խորհրդակցական մարմինների գործունեության, ընդունված որոշումների իրավարակայելությունը:
68. Խորհրդակցական մարմինների անդամների գործառույթներն են.
- 1) մասնակցում են խորհրդակցական մարմինների նիստերին.
- 2) հարցեր և՛ ներկայացնում խորհրդակցական մարմինների նիստերի օրակարգերի նախագծերու ընդգրկելու համար.
- 3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք խորհրդակցական մարմինների նիստերի ընթացքում ըննարկվող հարցերի վերաբերյալ.
- 4) մասնակցում են խորհրդակցական մարմինների որոշումների ընդունման բվեարկությանը.
- 5) ստորագրում են խորհրդակցական մարմինների որոշումները.
- 6) ծանոթանում են խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրություններին.
- 7) կատարում են խորհրդակցական մարմինների որոշումներից բխող կամ խորհրդակցական մարմինների նախագահի կողմից տրված հանձնարարականներ.
- 8) նախաձեռնում են համայնքային աշխատանքային խմբերի ծևավորումը:

**IX.ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ**

69. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:
70. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

*Դաշտե համայնքի շնորհ՝  
Դ. Դանիել*





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շամշեդ Խաչյան

## ՈՐՈՇՈՒՄ

« 03 » Մայիս 2016թվականի N 13-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**Բասեն համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքում հաերային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ավագանու անդամներ՝	Կողմ ( 4 )	Դեմ( 0 )	Ճեղոնպահ ( 0 )
--------------------	------------	----------	----------------

1. Փայրակ Այնքանյան

2. Մհեր Մնացյան

3. Մհեր Սարգսյան

4. Մնացական Հերեյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

03 Մայիս 2016 թվական

գյուղ Բասեն





Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Բասեն համայնքի ավագանու  
«03»մայիսի 2016 թվականի  
N13-Ն որոշման

## ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքում տեղական ինքնակառավարման առնչվող՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի նողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և դեկանարի որոշումների, համայնքի գյուղական գյուղատնտեսական, քաղաքականական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների (այսուհետ՝ իրավական ակտերի), ինչպես նաև համայնքի կառավարմանն ու զարգացմանն առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և հարցերի (այսուհետ՝ համայնքային հարցեր) հանրային բաց լուսների և (կամ) ըննարկումների (այսուհետ՝ հանրային ըննարկումների) կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման և համայնքի ավագանու դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հանրային ըննարկումների նպատակը իրավական ակտերի նախագծերի և համայնքային հարցերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրագեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացումն է:

3. Հանրային ըննարկումների հիմնական խնդիրներն են՝

- 1) ըննարկման դրվագ նախագծերի կամ հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտումը, այլընտրանքային տարրերակների, հնարավոր ծախսերի, օգուտների և հավանական դիսլերի վերաբերյալ տեղեկությունների ստացումը.
- 2) իրավասուհած և համայնքային զարգացման աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովումը:

4. Հանրային ըննարկումների կազմակերպման և իրականացման սկզբունքներն են՝

- 1) մասնակցայնությունը.
- 2) մատչելիությունը.
- 3) իրավաբանայնությունը.
- 4) թափանցիկությունը:

5. Հանրային քննարկումները կազմակերպում և անցկացվուա են համայնքի ղեկավարի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում կամ համայնքի որևէ ենթակառուցի շենքում կամ համայնքի բացօթյա որևէ տարածքում:

6. Հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը ֆինանսավորվուա է համայնքի տվյալ տարիս բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղյուրներից:
7. Հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը համայնքի ղեկավարը կարող է պատվիրել այլ անձանց:

## II. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

8. Հանրային քննարկումներին կարող են մասնակցել շահագրգիռ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք: Դրանք ընորոշվուա են առավելապես ոչ մասնագիտական ուղղվածությամբ և արտահայտվող քազմանույթ կարծիքներով, որոնք խորհրդատվական տեսանկունից կարող են աչքի չընելել մասնագիտական բարձր որակով: Այդ իսկ պատճառով հանրային քննարկումները պահանջում են օպանակի ճիշտ պլանավորում և քննարկումների ընթացքի հմուտ ուղղորդում:

9. Համայնքի ղեկավարը կարող է նպատակահարմար համարել նաև սահմանափակ թվով մասնակիցներով հանրային քննարկումների, ինչպես նաև նախագահ կանխորոշված շրջանակի անձանց հետ հանդիպումների անցկացումը: Հանդիպումներն անցկացվուա են համապատասխան բնագավառը մասնագետների և (կամ) այն կողմերի ներգրավմամբ, որոնք քննարկման դրված իրավական ակտի նախագծի կամ համայնքային հարցի պոտենցիալ հասցեատերերն են, և որոնց շահերը կարող են շոշափել այդ նախագծով կամ հարցով:

10. Հանրային քննարկումներին մասնագիտական պատշաճ մակարդակ ապահովելու համար դրանց կարող են իրավուրեք նաև համապատասխան քննագավառի պետական կառավարման մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, մասնագետներ, փորձագետներ և այլ շահագրգի անձիք:

11. Եթե հանրային քննարկման ներկայացված իրավական ակտի նախագիծը կամ համայնքային հարցե առնչվում է բազմաթակավայր համայնքի որոշակի քնակավայրերի հանրային շահերին, համայնքի ղեկավարը հանրային քննարկումներ է կազմակերպում և անցկացնում բոլոր այդ քնակավայրերում: Մասնավորապես, բազմաթակավայր համայնքի բոլոր քնակավայրերում հանրային քննարկումների կազմակերպումը և անցկացնումը պարտադիր է համայնքի գարգաւման շատամյա ծրագրի, համայնքի տարեկան բյուջեի և վերջինիս կառարձնաւ տարեկան հաշվետվության նախագծերի հանրային քննարկումների դեպքերում:

## III. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Հանրային ըննարկումների վերաբերյալ իրազեկում իրականացվում է հետևյալ կարգով:

1) հանրային ըննարկումների իրականացման օրվանից առնվազն 15 օր առաջ համայնքի ղեկավարը իրապարակում է հանրային ըննարկումների իրավեր, որն իրականացվում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում դա փակցնելու մթջոցով. ինչպես նաև ան վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի շնակչի համար՝ առնվազն մեկ տեղյուրաքանչյուր երեք հարյուր ընակչի համար.

2) հանրային ըննարկումների իրավերը, համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում, պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև նարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կամ հաղորդագրություններով (SMS-երով) և այլն): Հանրային ըննարկումների իրականացման ժամկետը համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելուց կամ այլ միջոցներով տարածելուց հետո առնվազն 15 օր է, եթե համայնքի ղեկավարի որոշմամբ չի սահմանվել առավել երկար ժամկետ:

13. Հանրային ըննարկումների իրավերը պետք է պարունակի հատուկ և սպառչ տեղեկություններ հանրային հարցերի վերաբերյալ՝

- 1) հանրային ըննարկումների իրականացման տեսակը՝ ըստ մասնակիցների շրջանակի;
- 2) հանրային ըննարկումների իրականացման վայրը և ամսաթիվը;
- 3) հանրային ըննարկումները սկսելու և ավարտելու ժամկետները;
- 4) հանրային ըննարկումների թեման;
- 5) հանրային ըննարկումներին մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների (եթե նման դիմում ներկայացնելը համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում) ընդունման վերջնաժամկետը (այն չի կարող պակաս լինել, քան հանրային ըննարկումների իրավերի իրապարակման պահից 10 օրը):

14. Հանրային ըննարկումների իրավերի հետ մեխտեղ իրապարակվում է՝

- 1) հանրային ըննարկումների դրվող նախագիծը կամ հարցը;
- 2) նախագծի կամ հարցի հիմնավորումը;
- 3) համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ սահմանված այլ նյութեր:

15. Հանրային ըննարկումները իրականացվում են պյանավորման, կազմակերպման և անցկացման փուլերում:

16. Հանրային ըննարկումների պյանավորման, կազմակերպման և անցկացման համար շատ ժամանակ և ուսուրասեր են պահանջվում՝ ըննարկումների արդյունավետ ընթացքն ապահովելու համար: Այս առունությունը պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝

- 1) ըննարկումների անցկացման վայրը ճիշտ ընտրությունը;
- 2) ըննարկումների մասնակիցների թվի որոշումը;
- 3) ըննարկումների ծեաչափի ընտրությունը;
- 4) այլ գործոններ, որոնք նարող են ազդել ըննարկումների ընթացքի վրա:

17. Հանրային ըննարկումները վարող անձը պետք է քաջատեղյակ լինի ըննարկող նախագծի կամ հարցի էռույանը և կարողանա հմտորեն կառավարել ըննարկումների ընթացքը:

18. Հանրային ըննարկումները վարող համայնքի դեկավարի կողմից նշանակված ներկայացուցիչն է: Սակայն, գործնականում, այդ նպատակով կարող է հրավիրվել նաև համապատասխան բնագավառի այլ մասնագետ՝ մոդերատոր, որն ունի հանրային ըննարկումների ընթացքն ուղղորդելու համար անհրաժեշտ հմտություններ: Ավելին, հասարակական հնչեղություն ունեցող սահմանադրությունը կամ հարցերի հանրային ըննարկումների ժամանակ, այլ չեզոք անձի ներգրավումը ըննարկումների վարման ընթացքին կարող է անգամ օգտակար լինել՝ ըննարկումների ժամանակ ծագող կոնֆլիկտային տարրեր իրավիճակները կառավարելու և հարթելու համար:

19. Հանրային ըննարկումներն սկսվելոց առաջ համայնքի դեկավարի ներկայացուցիչը մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր ըննարկումների վերաբերյալ, որոնք մինչ այդ հրապարակված չեն եղել հանրային ըննարկումների հրավերի հետ միասին:

20. Հանրային ըննարկումների ժամանակ համայնքի դեկավարի ներկայացուցիչը՝

- 1) նախագետ նշանակված ժամին բացում է հանրային ըննարկումները.
- 2) ներկայացնում է հանրային ըննարկումների բարտութարին (համայնքի աշխատավայրի բարտութարին գում նրա կողմից նշանակված աշխատակցին).
- 3) ներկայացնում է համապատասխան նախագծի կամ հարցի համառոտ նկարագիրը.
- 4) ներկայացնում է ըննարկան դրվող հարցերի շրջանակը:

21. Հանրային ըննարկումների մասնակիցները ըննարկման դրված նախագծի կամ հարցի վերաբերյալ կարող են հարցել ուղղել համայնքի դեկավարի ներկայացուցիչն, իրենց առարկությունները և առաջարկությունները հնչեցնել բանավոր ձևով կամ ներկայացնել հանրային ըննարկումների բարտութարին գրավոր տեսքով, որոնք հնչեցվում են հանրային ըննարկումները վարույթ կրթմից:

22. Համայնքի դեկավարի ներկայացուցիչը պատասխանում է բարձրացված հարցերին կամ ներկայացնում է իր կարծիքը հանրային ըննարկումների մասնակիցների կողմից արված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ:

23. Հանրային ըննարկումների բարտութարն արձանագրում է ըննարկումների ընթացքը, կազմում և ստորագրում է արձանագրությունը:

24. Արձանագրությունում նշվում են՝

- 1) ըննարկումներն իրականացնող համայնքի (բազմարնակավայր համայնքի դեպքում՝ նաև ընկալվայրի) անվանումը.
- 2) ըննարկումների ամսաթիվը.
- 3) ըննարկումների թվաքանակը.
- 4) ըննարկումների մասնակիցների առարկությունների և առաջարկությունների ամփոփ շարադրանքը:

25. Արձանագրությանը կցվում է նաև հանրային ըննարկումների մասնակիցների ցուցակը՝ նշուով մասնակցի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը և ստորագրությունը:

26. Հանրային թեսարկումների մասնակիցները կարող են իրենց տռարկությունները և առաջարկությունները գրավոր տեսրով ներկայացնել հանրային քննարկումների քարտուղարին նաև հանրային քննարկումների ավարտից հետո 5 օրվա ընթացքում, որոնք կցվում են արձանագրությանը:

27. Հանրային քննարկումների արդյունքները ենթակա են ամփոփման:

28. Հանրային թեսարկումների արդյունքում, թեսարկման գրված հարցերի առնչությամբ ստացված առարկությունների և առաջարկությունների վերլուծության և ամփոփման հիման վրա համայնքի դեկանարը նախագծում կամ հարցում կատարում է անհրաժեշտ լրամշակումներ:

29. Հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում տեղական ինքնակտուազում մարմինների և համայնքի կազմում ընդգրկված բոյր քնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերում փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրվում է՝

1) լրամշակված նախագիծը կամ հարցը,

2) հանրային քննարկումների ամփոփմաթերթը:

30. Համայնքի տարեկան բյուջե նախագիծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթերթի և լրամշակված նախագիծ՝ վերոնշյալ վայրերում փակցնելու, ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու ժամկետը սահմանում է համայնքի դեկանարը՝ ենթակա համայնքի ավագանու կողմից ըուժնուային քննարկումների ընթացքից:

31. Հանրային քննարկումների առջևնորդների ամփոփաթերթը կազմվում է «Հառավարության կողմից ընդունված համապատասխան նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով»:

32. Ամփոփաթերթում ներառվում են՝

- 1) տռարկությունների և առաջարկությունների հեղինակը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը և (կամ) իրավաբար անձի անվանումը),
- 2) գրության ամսաթիվը և համարը,
- 3) տռարկությունների և առաջարկությունների ամփոփ բովանդակությունը,
- 4) համայնքի դեկանարի նպակացությունը ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ,
- 5) նախագծում կատարված փոփոխությունը (կամ) լրացումը:

33. Ամփոփաթերթում չեն ներառվում տեխնիկական և խմբագրական բնույթի առարկությունները և առաջարկությունները: Նոյնական տռարկությունների և առաջարկությունների առկայության դեպքում դրանք կրկնակի չեն ներառվում:

34. Նախագիծի կամ հարցի վերաբերյալ ստացված առարկությունների և առաջարկությունների՝ համայնքի դեկանարի կողմից ընդունման դեպքում ամփոփաթերթում նշվում է «ընդունվել է» բառը: Առարկությունների և առաջարկությունների չընդունման դեպքում ամփոփաթերթում նշվում է «չի ընդունվել» և տրվում է չընդունման հիմնավորումը:

35. Առարկությունների և առաջարկությունների մասնակի ընդունման դեպքում նշվում է «ընդունվել է մասնակի» և տրվում է նախագիծի կամ հարցի դրույթի փոփոխության և (կամ) լրացման բովանդակությունները կամ ընույթը:

36. Եթե նոյն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացվել են մեկից ավելի առարկություններ և առաջարկություններ, ապա դրանք խմբավորվում են ամփոփաթերթի միևնույն հատվածում և համարակային են:

Ֆիզիկական կամ իրավաբանական ուսմագաւառախան անձից առարկություններ և առաջարկություններ չինելու դեպքում նշում է կատարվում դրանց բացակայության մասին:

37. Հանրային ըննարկումների ժամանակ հանրության կողմից բանավոր ծևզ ներկայացված առարկությունները և առաջարկությունները ամփոփաթերթում ներառվում են միայն ընդունիչները՝ նշելով հեղշնակի անոնք, ազգանունը:

Անհատներից ստացված առանցքային և նոյնարությանդ կարծիքները կարող են ընդհանուր գծերով խմբավորվել «Մի խումբ անձանց կողմից ներկայացված առարկություններ և առաջարկություններ» մերտառությամբ:

38. Մի քանի իրավական ակտորի նախագծեր կամ հարցեր պարունակող փաթեթի վերաբերյալ անուղղակի կազմելիս առարկությունները և առաջարկությունները պետք է ամփոփաթերթում խմբավորվեն համագաւառախան նախագծի կամ հարցի վերնագրի ներք:

39. Հանրային ըննարկումների արդյունքների ամփոփաթերթի ծևզ սահմանված է:

40. Հանրային ըննարկումների վերաբերյալ համայնքի ավագանին համագաւառախանը ստանում է տեղեկատվություն:

Հանրային ըննարկումների արդյունքներով, համայնքի դեկավարը կազմում է հանրային ըննարկումների վերաբերյալ տեղեկանք, որը համայնքի ավագանու ըննարկմանը ներկայացվող իրավական ակտի նախագծի և ամ հարցին կից փաստաթղթերից է:

41. Հանրային ըննարկումների վերաբերյալ տեղեկանքի կազման և համայնքի ավագանուն սերմանցման և լառուն է հանրային ըննարկումների վերաբերյալ օրենսդրական պահանջների լիարժեք կենսագործումը և հանրային ըննարկումների արդյունքների վերաբերյալ համայնքի ավագանուն տեղեկատվության տրամադրումը:

Ի լրումն ամփոփաթերթում գետեղվող առարկությունների և առաջարկությունների, հանրային ըննարկումների վերաբերյալ տեղեկանքում ամփոփ կերպով նշում են բոլոր այն առանցքային կառուցները, առարկությունները և առաջարկությունները, որոնք ներկայացվել են հանրային ըննարկումների ընթացքում:

42. Հանրային ըննարկումների վերաբերյալ տեղեկանքը հնարավորություն է տալիս՝

- 1) արտացոլելու հասարակեանաց որամադրությունները և մտահղողությունները.
- 2) կանխատեսյու իրավագան անոնի գնահատորները պոտենցիալ ռիսկերը.
- 3) եղանակակի անելու կարգավորման ընտրված եղանակի նպատակահարմարության վերաբերյալ.
- 4) վերահսկելու իրավատեղծ և համայնքի զարգացման գործընթացների թափանցիկության ապահովման վերաբերյալ օրենսդրական պահանջների կատարումը.
- 5) գնահատույթ հանրային ըննարկան համար ընդունած եղանակը և հանրային մասնակցության արդյունավետությունը:

43. Տեղեկաբուժական ակտի կերպով նշուայցվում է իրավական ակտի նախագծի կամ հարցի վերաբերյալ հանրային ըննարկմանը մասնակցած յուրաքանչյուր իրավաբանական անձի առարկությունների և առաջարկությունների առանցքային բովանդակությունը: Ֆիզիկական անձանցից ստացված նոյն առարկությունների և առաջարկությունների պարագայում, որանք են զետեղել «Մի խոճը անձանց առարկությունները և առաջարկությունները» վերտառությամբ՝ կրկին միայն առանցքային գծերով: Կրկնվող առարկությունները և առաջարկությունները տեղեկանքում գտնելվում են մեկ անգամ:

44. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ հանրային ըննարկումներում ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը ներառում է:

- 1) հանրային ըննարկումների արդյունքների ամփոփաթերթը.
- 2) հանրային ըննարկումների մասին տեղեկանքը:

45. Իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի հանրային ըննարկումներում ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝

- 1) հանրային ըննարկումների արդյունքների ամփոփաթերթը.
- 2) հանրային ըննարկումների մասին տեղեկանքը:

#### **IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ (ՁԵՎԵՐ)**

47. Սոորու թվարենքած եղանակներով (ձևերով) կազմակերպվող և անցկացվող հանրային ըննարկումներն իրականացվում են՝ հնարավորինս կիրառելով սոյն կարգի III բաժնում բերված ընթացակարգի պրոյցեները:

48. Իրականացվում են՝ հանրային ըննարկումներ, որոնք կատարվում են համացանցային կայքերի միջոցով:

49. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում, նախատեսվում է որ առական ակտի նախագծի կամ համայնքային ուրցի այլ կայքում պարուղիք տեսաշրջումը և դրա շորջ ֆիզիկական և իրավաբանական անձանցից կարծիքների հագարագումը:

50. Համացանցային կայքերի միջոցով հանրային ըննարկումների անցկացումը, հանրային ըննարկման այլ եղանակների համեմատ, ունի մի շարք առավելություններ, որոնք ել մեծապես պայմանավորում են օրա նպատակադարությունը՝ որպես հանրային ըննարկումների գործորագույն եղանակը, մասնավորապես՝

- 1) ըննարկումները ժամանակի և տարածության մեջ առավել հասանելի են հասարակության լայն խմբերի համար՝ նպաստելով առավել մեծ թվով անձանց մասնակցությունն իրավասության և համայնքի գարգացման գործընթացներին,
- 2) այս եղանակով կարծիքների և հարցադրումների հավաքագրումը նվազ ժամանակում՝ ուժամանակականությունը:

**51.** Ֆիզիկական և իրամաքանական անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայրում իրասարակված իրավական ակտի նախաձեռ կամ համայնքային հարցի վերաբերյալ նարու և ներկայացնել իրենց առարկությունները և առաջարկությունները՝ դրանք՝

- 1) թողմելով համայնքի համացանցային կայցում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում;
- 2) ուղարկելով ուսմագաւայսան լեկուրոնային հասցեով;
- 3) գրավոր ձևով ներկայացնելով համայնքի դեկավարին:

Եթե առարկությունները և առաջարկություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա համայնքի աշխատակազմի քարտուղարը կամ նրա կողմից նշանակված աշխատակիցն անմիջապես, բայց ոչ ոչ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տօղմականություն է համապատասխան առարկությունները և առաջարկությունները ստանալու մասին:

**52. Հանրային քննարկումների իրականացում՝ հեռահղորդակցության միջոցների կիրառմամբ:** Հանրային քննարկումներ կարեի է իրականացնել նաև տեղական հեռուստատեսության, ռադիոյի, լեռակոնֆերանսների և հեռահղորդակցության այլ միջոցներով։ Նևան եղանակներով՝ հանրային քննարկումները հատկապես նպատակահարման գորոդ են ինեւ նրբ հանրային քննարկումներին մասնակցության խոչընդուն է տարածքային հասանելիությունը (օրինակ քազմաքանակավայր համայնքի կենտրոնից հեռու գտնվող բնակավայրերի քննակիցների համար):

**53. Հեռահղորդակցության միջոցներով հանրային քննարկումների մասնակիցները պետք է ուժիդ նրբություն կամ այլ եղանակներով իրենց առարկությունները և առաջարկությունները ներկայացնելու հնարավորություն ունենան:**

**54. Հանրային քննարկումների իրականացում՝ հարցումների միջոցով:** Հարցումների միջոցով հանրային քննարկումներն օգտակար կարող են լինել հատկապես իրավական ակտի նախաձի կամ համայնքային հարցի մշակման նախնական փուլում, եթե դեռ նախագիծը կամ հարցը գաղափարի իրում է, և հարցումները թույլ կուն պարզեցնելու և բարերար կարգավորության ուղղական ուղղություն առնա խնդիրները և բացերը։

Հանրային քննարկումների այս եղանակի առանձնահատկությունն այն է, որ համայնքի աշխատակազմն ինքն է առանձնացնում հարցերի այն շրջանակը, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ նախագիծի կամ հարցի մշակման համար, և դրանք առաջդրում է քննարկումների մշակմական գործություններին։

**55. Հարցումների միջոցով հանրային քննարկումների անցկացնելու պայմանները հետևյալն են.**

- 1) հարցումների միջոցով հանրային քննարկումներն իրականացվում են գրավոր ձևով, սակայն, ըստ հայեցողության, նարու են անցկացվել նաև բանավոր ձևով։
- 2) հարցումները միջոցով հանրային քննարկումների իրականացման համար անհրաժեշտ է նախագիծ մշակել հարցաշարեր (գրավոր հարցումների դեպքում՝ հարցաթերթիկներ, իսկ բանավոր հարցումների դեպքում՝ ուղարկությունների սպառիչ ցանկ):

**56. Հարցումների արդյունավետությունը մեծապես կախված է հարցաշարերի կազմման մասնագիտական որակից։**

57. Կախված հարցաշարում ներկայացված հարցադրման բնույթից, կարող է ակնկալվել՝

- 1) «այս» կամ «ոչ» կամ «դժվարանում եմ պատասխանել» պատասխան,
- 2) մասնակցի դիրքորոշման, կարծիքի կամ առաջարկության շարադրանք:

58. Գրաւոր ձևով հարցումների դեպքում, հարցաշարերը տարածելու առավել արագ և բիշ ծախսատար ներառյալ է գրանց տեղադրումը համայնքի պաշտոնական համացանցային կայցում:

59. Գրավոր կամ բանավոր ձևով հարցումները կարող են անցկացվել նաև հանրային բաց լուսմների և (կամ) ըննարկումների, համայնքային օպերատորների օպերատորների կամանակ:

60. Գրաւոր կամ բանավոր ձևով հարցումների դրականացման ընթացակարգի հիմնական գործուրություններն են՝

- 1) հարցումն իրականացնող՝ համայնքի դեկավարի ներկայացուցիչը ներկայացնում է համապատասխան նախագծի կամ հարցի համառոտ նկարագիրը և հարցման նըթակա հարցերի շրջակակը,
- 2) հարցումն մասնակիցների իրենց առարկությունները և առաջարկությունները ներկայացնում են հարցումն իրականացնողին;
- 3) գրավոր ձևով հարցման դեպքում հարցաթերթիկները կարող են բաժանվել հարցման մասնակիցներին՝ վերապահելով նրանց որոշակի ժամկետում դրանց պատասխանելու ներկայացնելու հնարավորություն։ Այս դեպքում հարցումն իրականացնողը պետք է համուկ նշի լրացված հարցաթերթիկները նրան փոխանցույթ կարգը և ժամկետը,
- 4) հարցումն իրականացնողը կազմում և ստորագրում է հարցումների վերաբերյալ արձանագրություն։

61. Արձանագրությունում նշվում են՝

- 1) հարցումները դրականացնող համայնքի (քաջարնակավայր համայնքի դեպքում՝ նաև ընակավայրի) անվանումը,
- 2) հարցումների ամսաթիվը,
- 3) հարցումների թվաքանակը,
- 4) հարցումները մասնակիցների առարկությունները և առաջարկություններն ամփոփ ձևով։

62. Հարցման ընթացքում մասնակիցների կողմը գրավոր ձևով ներկայացված առարկությունները և առաջարկությունները կցվում են արձանագրությանը։

#### Վ. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

63. Համայնքի գիշավոր հատակսգծի, քաղաքաշինական, և ենսագործունեության միջավայրը ծրագրվող փոփոխությունների հանրային ընտարկումների կազմակերպումը և անցկացումը, դրանց վերաբերյալ առաւելությունների և առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծուր հեղինակներին իրականացվում է ներկայացումը նախաձեռնությունների և նախագծուր հեղինակներին իրականացվում է

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի № 660 որոշումը սահմանված կարգով՝ համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 և 14-րդ հոդվածների պահանջների:

64. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հանրային ծանուցման, բնար լումների կազմակերպումը և անցկացումը, դրանց վերաբերյալ առարկությունների և առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակագրին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի № 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ համաձայն «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների:

Դիմութեալ Աննա Մանուկյան



Դ. Խոչուր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Բասեն համայնք,

### ՈՐՈՇՈՒՄ

« 03 » Մայիս 2016 թվականի N14-Ն

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՍԱԿԱՌՎԱՐՄԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 0.1-ին հոդվածի, 16 րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, իհմը ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի № 1325-Ն որոշումը,

**Բասենի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՍՆԵՐ՝

Ավագանու անդամներ՝

Կողմ ( 4 )

Դեմ( 0 )

Ճեղնպահ ( 0 )

1. Փայլակ Ալեքսանյան

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

2. Մհեր Մնացյան

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

3. Մհեր Սարգսյան

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

4. Մնացական Հերեյան

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



03 Մայիս 2016 թվական

գյուղ Բասեն

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՏԱԿԱՌՄԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

- Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քասեն համայնքում տեղական նիրնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունները:
- Սույն կարգի նպատակն է՝ ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հաստվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում երաշխավորելով հանրային տեղակառության լիազատար թափանցիկությունն ու մատչելիությունը:
- Սույն նարգի խնդիրներն են՝
  - հաստակեցնել համայնքի մասնակցային կառավարման համակարգում շահագրգիռ բոլոր կրթմերի դերերը և պարտավանությունները.
  - համայնքում հիմնել և կիրառել բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգեր, ընթացակարգեր, գործընթացներ և ձևեր.
  - ձևավորել համայնքի կառավարման նոր, քաղաքացիամետ մոտեցումներ.
  - բնակիչները համար ստեղծել հնարավորություններ՝ ունենալու ակտիվ դեր համայնքի կառավարման և զարգացման գործում.
  - պայմաններ ստեղծել համայնքում առկա շահերի հավասարաշափ ներկայացումը և հավասարակշռությունը որոշումների կայացման գործընթացում.
  - համայնքում ապահովել փոխվստահության մթնոյրությունը:
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներն են՝
  - հաստի փորձություն,
  - վատահուզություն,
  - թափանցիկություն,
  - հրապարակայնություն,
  - ակտիվություն,
  - օպերատիվություն և արագ արձագանքություն,
  - արդյունավետություն,
  - պատասխանատվություն և հաշվետվողականություն:
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը (այսուհետ՝ Մասնակցության նարգը) ստորագրված է համայնքի բոլոր Ֆիզիկական և իրավաբանական անձանց և ոչ ֆորմալ խմբերի պատճենությամբ:
- Սույն գարգուտ օգտագործելող ռավացրություններն են՝

1) Մասնակցային ժողովրդավարություն՝ համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները լայն մասնակցություն են ունենում համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:

2) Բնակիչների մասնակյություն՝ համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղակացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա.

3) Բնակիչների նախաձեռնություն՝ համայնքում իրականացվող գործընթաց, որի նպատակ է բնակիչների ձայնը լսելը և խնդիրները տեսանելի դարձնել տեղական ինքնակառավարման մարմիններին, կամ գրավոր գուստարտույթ՝ դիմումի, բողոքի, առաջարկության կամ նախագծի տեսքով, որը ստորագրվում է բնակիչների կամ նրանց խմբի կողմից և հասցեագրվում է տեղական ինքնակառավարման մարմիններին.

4) Ընդունելություններ և «քաց դուների» ծրագրեր՝ գործընթացներ, որոնք իրականացվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մոտ նախօրոք սահմանված ժամանակությունների համաձայն, բնակիչների կամ նրանց պատվիրակությունների ընդունելություններ և այցելություններ կատարելու միջոցով: Այս գործընթացների նպատակն է խթանել և բացալերել բնակիչներին, որպեսզի նրանք առանց որևէ պատճառի կամ նպատակի այցելել տեղական ինքնակառավարման մարմինների նստավայր կամ համայնքային որևէ հազմակերպություն՝ նրանց գործունեությանը ծանորանալու և համայնքային իրենց հոգու խնդիրները ուղղացնելու համար:

## II. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության գործընթացում մասնակիցների ղերերը և փոխհարաբերությունները

7. Սույն կարգի օրինաստեղծության գործառույթը տրված է համայնքի ավագանուն:
8. Համայնքի ավագանին ընտրակում է որոշում է կայացնում Մասնակցության կարգը հաստատելու մասին: Ավագանին օճանդակում է վերահսկու է համայնքում Մասնակցության կարգի ներդրումնը և իրականացմանը:
9. Համայնքի ավագանին, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը խրախուսելու նպատակով, կարող է սահմանել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակ: Ավագանին մրցանակը շնորհում է տվյալ տարվա ընթացքում համայնքում տեղական ինքնակառավարմանը ամենակտիվ մասնակցություն ցուցաբերած բնակչության կամ բարձրացնելու հասարակության կամ մասնավոր հատվածի կազմակերպության վամ ոչ ֆորմալ խմբի ներկայացուցիչն:
10. «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի շնորհման թեկնածուներ համայնքի ավագանուն եարող են առաջարկել համայնքի ղեկավարը և/կամ համայնքի ղեկավարին կող հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինները:
11. Բնակչության մասնակցության գործընթացներում իր գործառույթներն ունի համայնքի ղեկավարը:
12. Համայնքի ղեկավարը ստեղծում է բավարար պայմաններ և հնարավորություններ բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի

կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի համար՝ լինելու իրազեկ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարման ու գարգացմանը, մասնավորապես, հետևյալ գործընթացներում՝

- 1) տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության՝ օրենսդրական դրույթների լիարժեք կիրառում և կատարում.
- 2) իրավական ակտերի նոր նախաձեռնությունների և նախագծերի ընարկումներ.
- 3) համայնքի գործադրման ուղղափառությունների և ծրագրերի (տարեկան, քառամյա, երկարաժամկետ և հատուկ) մշակում, ըննարկում, իրականացում և վերահսկում.
- 4) համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների գործունեության, ներառյալ՝ դրանից ստացված արդյունքների և շահառուների վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և գնահատում.
- 5) համայնքի բյուջեի կազմում, ընսարկում, կատարում և վերահսկում.
- 6) համայնքային ծառայությունների մատուցումը բարելավելու վերաբերյալ քննարկումներ և համայնքի ավագանու որոշումների նախագծերի կազմում և ներկայացում.
- 7) տեղական հետկերի, տուրքարի, վճարների որոշքաշափերի, համայնքային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարների չափերի, դրանց հավաքագրման առկա խնդիրների և բաղադրականության վերաբերյալ քննարկումներ.
- 8) տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության այլ գործընթացներ:

**13.** Համայնքի ղեկավարն ապահովում է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության միոցառումների կազմակերպումը և անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար մայրերում: Համայնքի ղեկավարը ստեղծում է համաստասխան պայմաններ և միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող աւձանց, սպակավարժ խմբերի, կարդալու և լսելու դժվարություններ ունեցող բնակիչների լիարժեք մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

**14.** Համայնքի ղեկավարն ապահովում է համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների համագործակցությունը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ նրանց իրազեկելու և կրթելու՝ համայնքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

**15.** Համայնքի ղեկավարը համայնքի ավագանու անդամներին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, ակտիվ բնակիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է, համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում՝ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարգավառում նրանց գիտելիքները հարստացնելու և հմտությունները զարգացնելու նպատակով:

**16.** Համայնքի ղեկավարն ապահովում է ընդունված Մասնակցության կարգի իրագելումը համայնքում առկա բոլոր շնորհագիր կողմերին, այդ թվում այն բնակիչներին, որոնք ունեն զարդարություն, գրալու, շարժմելու զամ այլ դժվարություններ, տնային տնտեսություններին և սոցիալական այլ խմբերին պատկանող մարդկանց:

**17.** Բնակիչների մասնակցության բնագավառում կարևորվում է քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ղերն ու գործունեությունը:

**18.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում շահագրգիռ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և ոչ ֆորմալ խթանի դերը կայանում է հետևյալում:

1) Ծանոթական են սույն կարգի հետ և յայնորու տարածում այն համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի շրջանում.

2) մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող և անցկացվող հանրային բնարկումներին, հանդիպումներին, ժողովներին, համայնքներուն, հանրային միջոցառումներին և բնակիչների մասնակցության այլ ձևերին.

3) շահագրգուվածություն և ակտիվություն են հանդես բերում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում սույն մասնակցության կարգի ներդրման և կրթառուս գործում.

4) Եղանակացություններ և առաջարկություններ են ներկայացնում համայնքի ղեկավարին տեղական ինքնակառավարման բնագավառում նախաճռնությունների և նախագծերի վերաբերյալ:

**19.** Համայնքի մասնակցային կառավարման գործընթացի անբաժանելի մաս են կազմում համայնքի բնակչությունը:

**20.** Համայնքի մասնակցային կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների կամ նրանց խմբերի մասնակցությունը կարող է լրաց հետևյալ ուղղություններով՝

1) մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող և անցկացվող հանրային բնարկումներին, հանդիպումներին, ժողովներին, համայնքներուն, հանրային միջոցառումներին և բնակիչների մասնակցության այլ ձևերին.

2) Անդրդապիկածություն՝ տեղական ինքնակառավարմանը բնակչությունից մասնակցության բնագավառում խորհրդակցական (խորհրդատվական) մարմինների, հանձնաժողովների, խորհուրդների, ֆոկուս խմբերի, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ձևավորմանը և գործունեությանը.

3) հանրային շահերի պաշտպանություն,

4) ուսուցչական աշխատանք,

5) փորձագիտական աշխատանք,

6) հետադարձ կապ համայնքային ծառայությունների մատուցման որակի և մատչելիության բարեկարգման աշխատանքներում:

### **III. Եղանական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերը և իրականացման միջոցները**

**21.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը իրականացվում է երկու եղանակով՝ պատր և ակտիվ։ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության պատրվ ձևերը են բնակիչների ծանուցումը, իրազեկումը և (կամ) կրթումը։ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղական ինքնակառավարմանը բնակիչներին ծանուցումը և իրազեկումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն կարգով։ Տեղական

ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվ ձևերից են բնակիչների ներգրավումը համայնքի կառավարման և զարգացման, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացներում հետաքրություն տալով բնակիչներին ներազելու դրանց վեա բնակիչների կարծիքի հարցումը և բնակիչներից տեղեկատվության հավաքագրումը:

22. Մասնակցության առաջին ձևերն են՝ տեղեկացման (իրագելման) և կրթության ձևերը:

23. Մասնակցության այս ձևերն օգտագործելիս բնակիչների կարծիքներն ու գաղափարներն ինանայու անհոգացուցյուն չի օգացվում, հետևաբար դրանց օգտագործման հասուն կառուցւյարգեր և ընթացակարգեր չեն սահմանվում:

24. Բնակիչների տեղեկացման և կրթության ձևերն թվին են դասվում.

1) հանրային տեղեկատվությունը, այդ թվում՝

- ա. հայտարարությունները տեղական գանգվածային լրատվության միջոցներով,
- բ. տեղեկատվություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի տարածքում ծրագրելու տարրեր միջոցառումների մասին,
- գ. համայնքի ավագանու նիստում ուղիղ հեռարձակումը, ինչպես նաև դրանց տեսագրության ցուցադրումը բնակիչներին ավելի հարմար ժամերի,
- դ. ուսդիոհեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը, որոնք ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ մեջնարանուրություններ և վել լուծուրություններ,
- ե. տեղական ռազմական և հեղուունային մամուլը.

2) հանրային գեղույցները և հաշվետվությունները.

3) տեղեկատվական կենտրոնները, «մեկ պատուհանի» սկզբունքով ընդունարանները.

4) կրթական (ուսուցման, վերապարաւուման և այլ) ծրագրերը.

5) ընդունելությունները և «բաց դռներ» ծրագրերը.

6) և այլն:

25. Տեղական գանգվածային լրատվության մրցուների առկայության դեպքում, գանգվածային լրատվության միջոցները կարող են հրավիրվել ավագանու նիստերը լրաբանելու համար:

26. Մասնակցության հաջորդ ձևերն են՝ ներգրավման և ներգործության ձևերը: Դրանք իրականացվում են ներկայացնությունների անցկացման միջոցով.

- 1) ուսեր այն բաց խումբ և (կամ) ընտարկումների լրագրավում և անցկացում.
- 2) հանրային ժողովներ և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ կազմակերպում.
- 3) հարցումների կազմակերպում և անցկացում.
- 4) ֆոկուս խարսրի ձևավորմանը.
- 5) խորհրդական մատիրաների աշխատունքներում ներգրավմամբ.
- 6) համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ձևավորմամբ.
- 7) համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու բնակիչների նախաձեռնության իրավունքի իրագործմամբ.
- 8) տեղական գանգվածային լրատվության միջոցների կիրառմամբ.
- 9) կրթուունային և համազանցային միջոցների կիրառմամբ:

27. Հանրային բաց խումբները և (կամ) ընսարկումները կազմակերպում են համայնքի համար առավել կարևորություն ունեցող հարցերի և իրավական ակտերի նախագծերի

(գլխավոր հատուկագիծ, գոտիավորման և հողօգտագործման սխեմաներ, զարգացման ռազմավարություններ, ծրագրեր բյուջեներ և այլն) պաշտոնական մթնոլորտում (ֆորմայ եղանակով) ընդունվելու նպատակով:

**28.** Հանրային ժողովները և շահագրգիռ անձանց հետ հանդիպումները կազմակերպվում են համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրային կամ մասնակիցների կանխորոշված շրջանակի տեսակետների և կարծիքների արտահայտման համար համարավորություն ստեղծելու նպատակով: Դրանք կազմակերպվում են անց են կազմում ոչ պաշտոնական մթնոլորտում (ոչ ֆորմայ եղանակով):

**29.** Հանրային բաց խոհմանը և (չամ) ըննարկումների, ժողովների և շահագրգիռ անձանց հետ հանդիպումների իրականացման ընթացակարգերը և ժամկետները սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ հաստատված «Համայնքում հանրային բաց խոհմանը (և այլ) ըննարկումների կազմակերպման և անցկացման կարգով»:

**30.** Հարցումներն անց են կացվում համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ ընսկզբանը կարծիքները և տեսակետները պարզեցն նպատակով: Հարցումներին կարող են ներգրավվել համայնքի բոլոր ընակիչները կամ նրանց որոշակի խմբերը:

**31.** Հարցումները կարող են նախաձեռնել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության կամ մասնավոր հատվածի կազմակերպությունները:

**32.** Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախաձեռնվող հարցումները կազմակերպվում և անցկացվում են հետևյալ ընթացակարգով՝

1) նախաւում մշակվում է հարցման ննջակա հարցի կամ նախագծի վերաբերյալ հարցաշար՝ կազմված պարզ և հաւաք ծևակերպված հարցերից;

2) հարցը ները կարող էն անցկացվել կամ հետախոսազնգերով, կամ ընակիչների ընակարաններ այցելություններով, կամ փոստով (ներառյալ՝ էլեկտրոնային), կամ բջջային հեռախոսների կարճ հաղորդագրություններով, կամ այլ միջոցներով.

3) համայնքի պաշտոնական համացանցային կայրի առկայության դեպքում, հարցումները կարող են անցկացվել տոցանց /online/ ռեժիմով՝ կայրում տեղադրելով նախօրոք պատրաստված հարցաշարը: Հարցումները կարող են անցկացվել նաև համացանցային սոցիալական հարթակներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված խմբերում և էջերում կամ համացանցային և ծրագրային այլ նորոգներում եթե այդպիսիք առկա են.

4) հարցումներն անցկացնող խումբը վերլուծում և ամփոփում է հարցումների արդյունքները, դրանց վերաբերյալ պատրաստում է գեկուց և նորկայացնում համայնքի դեկավարին:

5) համայնքի դեկավարը՝ ծանոթանալով հարցումների վերաբերյալ գեկուցին, հրապարակում է ան, ներկայացնում է համայնքի ավագանու ընսարկմանը և, անհրաժեշտության դեպքում, որոշակ կայացմանը:

**33.** Համայնքի դեկավարը հարցումները կազմակերպում և անցկացնում կարող է պատվիրակել նման գործունեության փորձ ունեցող՝ քաղաքացիական հասարակության կամ մասնավոր հատվածի որևէ կազմակերպությանը կամ խմբին: Այդ դեպքում հարցում անցկացնող կազմակերպությունը կամ խումբը ինքն է պատրաստում հարցաշարը՝ համաձայնենթյունի համայնքի դեկավարի հետ, անցկացնում է հարցումները, վերլուծում և

ամփոփում է դրանց արդյունքսերը, դրանց վերաբերյալ պատրաստում է գեկոյց և ներկայացնում համայնքի ղեկավարին:

**34.** Նոյն հարցի վերաբերյալ պարբերաբար (յուրաքանչյուր երկու կամ երեք տարին մեկ անգամ) կարող են անցկացնել հարցումները, որոնց նպատակն է գնահատել բնակիչների կարծիքների և վերաբերմունքի փորձիությունները, ինչպես նաև՝ պարզել, թե նմանատիպ հարցումների անցկացման միջանլիքը ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումներն ինչպես են ներազդել բնակիչների վրա:

**35.** Ֆոկուս խումբը կարող է ձևավորվել տեղական ինքնակառավարման մարմինների որևէ նպասգծի կամ նարաւաճեռության նպատակամք համայնքի բնակիչները «յու մեծամասնության» վերաբերմունքը պարզելու և մուտքային ժամանակեղու նպատակով: Ֆոկուս խմբի անդամները կարող են ներկայացնել համայնքը կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրը կամ թաղամասը՝ որպես տարրեր տեսակետների կրողներ: Յուրաքանչյուր ֆոկուս խմբում կարող են ընդգրկվել 5-12 մարդ: Ֆոկուս խմբերի աշխատանքներին աջակցում է համայնքի ղեկավարի կողմից նշանակված ներկայացուցիչը կամ հրամիրված խորհրդատուն (գործադեմություն):

**36.** Հանդիպումները կարող են անցկացվել տարրեր ֆոկուս խմբերի հետ՝ համեմատական կարծիքներ ստանալու նպատակով,

**37.** Ֆոկուս խմբերի հանդիպումներն անցկացվում են հետևյալ ընթացակարգով՝

1) հանդիպումները կազմակերպվում և անցկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում կամ համայնքի ցանկացած այլ վայրում,

2) յուրաքանչյուր ֆոկուս խմբի հանդիպման ժամանակ ներկայացուցիչը կամ խորհրդատուն հարցեր է տալիս խմբի անդամներին տեղական ինքնակառավարման մարմինների նախագծի կամ նախաճեռության վերաբերյալ,

3) ներկայացուցիչ կամ խորհրդատունի կամ նրա օգնականի կողմից խմբի անդամների կարծիքները և պատասխանները նախամասն գրի են առնվում կամ ձայնագրվում են արդյունաբեր ձևով,

4) ներկայացուցիչը կամ խորհրդատուն հետագայում վերլուծում և ամփոփում է ֆոկուս խմբերի անդամների պատասխանները, պատրաստում է գեկոյց դրանցից ստացված արդյունքների և իր եզրակացությունների ու առաջարկությունների վերաբերյալ և ներկայացնում համայնքի ղեկավարին:

**38.** Եռեկուս խմբի ներկայացուցիչի կամ խորհրդատունի գեկոյցը տեղական ինքնակառավարման մարմինների համար կարող է հրաժ հանդիսանալ համայնքային որոշակի քաղաքականության մշակման, ընդունման և իրազրծման համար:

**39.** Խորհրդակցական մարմինները համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող մարմիններ են, որոց միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնագցությունը ուսմայնիր կառավարմանն ու զարգացմանը: Խորհրդակցական մարմինները իրականացնում են խորհրդատվություններ, ներկայացնում են եզրակացություններ և առաջարկություններ համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքային քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներում:

**40.** Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ծեավորման և գործունեության ընթացակարգերը և ժամկետները սահմանվում են համայնքի ավագանու

որոշմամբ հաստատված «Համայնքի դեկանարին կից խորհրդակցական մարմինների ձևափորման և գործունեության կարգով»:

- 41.** Համայնքային ֆորմալ իրավաբանական անձի կարգավիճակը ունեցող հասարակական կազմակերպություններ, միություններ, միավորումներ, հիմնադրամներ և այլն) և ոչ ֆորմալ խմբերը (իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող քաղաքացիական, նախաձեռնող սկզբանական և այլն) կարող են ստեղծվել համայնքում առկա խնդիրների լուծման ուղիների որոնման, բնարկման և գաղափարների փրփառական բնակչության ուղղության և այլ նպատակներով: Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը ստեղծվում և հանդես են գալիս հատկապես համայնքային ծրագրերի մշակման ու կառավարման, համայնքային ծառայությունների մատուցման գործընթացներում բնակչության մասնակցությունն ապահովելու և բնակչության խնդիրները տեղական ինքնակառավարման մարմիններին հասանելի դառնելու և նպատակով:
- 42.** Համայնքային ոչ ֆորմալ խմբերը ստեղծվում և գործում են ուժուայլ ընթացակարգով՝
- 1) համայնքային ոչ ֆորմալ խմբերին կարող են անդամակցել համայնքի (թաղամասի, տարածքի, բնակչության) շահագրգու բոլոր բնակչությունը, քաղաքացիական հասարակության և մասնավոր ռատկածի ներկայացուցիչները,
  - 2) համայնքային յուրաքանչյուր ու ֆորմալ խումբ ին կազմից որոշակի ժամկետով կարող է ընտրել դեկան և (կամ) տերակայացուցչական մարմին, որընք իրավասու են ներկայացնել խումբը ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ այլ մարմինների հետ հարաբերություններում,
  - 3) Տեղական ընթակառավարման և սարմինները օժանդակություն են ցուցաբերում համայնքային ոչ ֆորմալ խմբերին՝ մարդկային, տեխնիկական, տեղականվական և այլ ուսուուրածները տարրով,
  - 4) համայնքային ոչ ֆորմալ խմբերը կարող են լուծարվել, եթե համայնքային տվյալ խնդիրը լուծվում է կամ կորցնում իր առդիականությունն ու հետաքրքրությունը:
- 43.** Համայնքի ավագանու նիստը օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդիսանալ համայնքում հաշվառված, տասնեւեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան 1 տոկոսը տասը հազարը ազգի բնակիչ ունեցող համայնքներում, 2 տոկոսը՝ հազարից մինչև տասը հազար բնակիչ ունեցող համայնքներում, և 4 տոկոսը՝ մինչև հազար բնակիչ ունեցող համայնքներում:
- 44.** Համայնքի ավագանու նրանի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության համար անհրաժեշտ է ձևափորել համայնքի առնպազն 5 բնակչություն կազմված նախաձեռնող խումբ (այսուհետ՝ նախաձեռնող խումբ):
- 45.** Նախաձեռնող խումբը կազմակերպում և իրականացնում է համայնքի նախաձեռնությանը կողմ բնակչություն ստորագրահավաք՝ առնվազն սույն կարգի 43-րդ կետով սահմանված քանակով, հավաքելով յուրաքանչյուր ստորագրողի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման հասցեն, անձնագրի համարը և ստորագրությունը:
- 46.** Նախաձեռնող խումբը կազմում և համայնքի դեկանարին ներկայացնում է ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության դիմում (հանրագիր, խնդրագիր,

միջնորդագիր՝ ստորագրված իր բոլոր անդամների կողմից, որին կից ներկայացնում է նաև՝

- 1) համայնքի ավագանու սետի օրակարգում ընդգրկվելոք հարցի բռնպահությունը.
- 2) Նախաձեռնությանը կողմ բնակիչներից ստորագրահավաքի լրացված պաշտոնաթերթիկը.
- 3) համայնքի ավագանու որոշման նախագիծը, դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և իրաւանացման ֆինանսական ծախսերի նախահաշիվը (այս փաստաթղթերը կազմելու համար նախաձեռնող խոմքը կարող է դիմել և սուսայ համայնքի աշխատակազմի բարուութարի և ֆինանսական պաշտոնատար անձի մասնագիտական խորհրդատվությունները).
- 4) իր անդամների անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման հասցեն, աշխատանքի վայրը, գրադերած պաշտոնը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (նախաձեռնող խմբի անդամների առձնահետ տվյալների ձևաչփային նկույզ ևս սահմանված է հավելված 1-ում):

**47.** Նախաձեռնող խմբի դիմումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարը ստուգում է այդ դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի դրույթներին, ստորագրահավաքի օրինակներուն ու արօն ստացածությունը և դրանց կցում է իր գրավոր եղակացությունը ներկայացված նախաձեռնության վերաբերյալ:

**48.** Համայնքի բնակիչների (ի դեմս նախաձեռնող խմբի) նախաձեռնությունը համայնքի ղեկավարի կողմից պարուղի կարգով ներկայացվում և ըննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, բայց համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց ուժո՛ մեկ ամսվա ընթացքում:

**49.** Բնակիչները սախաճանությունը ավագանու սրտում ներկայացնում է նախաձեռնող խմբի կողմից ընտրված ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա ըննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգութեամբ:

**50.** Նույն նախաճանությունը աշխատանքանու ընթարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով բնողության ավագանու նիստի օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) ընսարկություն առարկանու վեց ամիս հետո:

**51.** Տեղական ինքնակառավարման մարմինները համայնքում առկա տեղական գանգվածային լրատվության միջոցները (տպագիր մամուլ, մալուսային, թվային և (կամ) անարգային հեռուստատեսություն ուսուցություն և այլն) կարող են օգտագործել ինչպես հանրային տեղեկատվություն տարածելու, այնպես էլ տեղական ինքնակառավարմանը բնակիչներին և գրքամեյուն նպատակով:

**52.** Բնակիչները կարող են տեղական գանգվածային լրատվության միջոցներում ահազանգերի, հաղորդագրությունների, հայտարարությունների, հոդվածների, ելույթների և այլ ձևերով ներկայացնել համայնքի այս կամ այն խնդրի վերաբերյալ իրենց դիրքորոշումը, առագողությունները, տեսակենունները և առաջարկությունները, որոնք ուղղված են ամբողջ համայնքին, այդ թվում՝ տեղական իշխանություններին:

**53.** Տեղական գանգվածային լրատվության միջոցների կիրառումը հատկապես արդյունավետ է բնակիչների հետ ուղիղ կապ ապահովելու և նրանց երկխոսության մեջ

Ներգրամիկությանը համար՝ Զանգվածային լրատվության միջոցների կյանքան այդպիսի ձևերից են՝

- 1) «հյուրընկալվող» թոքուները, բազմաբնույթ ըննարկումները, համայնքի ղեկավարի և (կամ) ավագանու անդամների կողմից տրվող մամլո ասուլիսները.
- 2) ուղիղ եթերով հեռարձակվող հարցաքրոջները և բազմապիսի հաղորդումները, որոնց ժամանելք ընալիչները հեռավորություն ունեն հեռախոսազանգերով կամ այլ միջոցներով անհջապես հարցեր ուղղու տվյալ միջոցառմանը հրավիրված տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների պաշտոնատար անձանց, փորձագետներին և միջոցառման այլ մասնակիցներին:

54. Համայնքը իր պաշտոնական լիեկորոնային դրսուով մշտական էլեկտրոնային հաղորդակցություն է ապահովու իր ընակիցների հետ:

55. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող տարբեր ծրագրերի, նախագծերի, միջոցառումների և նմանատիա այլ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումը լրականացվու է տեղական ընքնակառավարման մարմինների պաշտոնական համացանցային կայրի, տարբեր համացանցային սոցիալական հարթակներում տեղական ընքնակառավարման մարմինների կողմից ստեղծված խմբերի և էջերի, ինչպես նաև համացանցային և էլեկտրոնային այլ միջոցներով:

56. Համակարգչային և համացանցային տեխնոլոգիաների կիրառումը կատարվու է հետևյալ ընթացակարգությունով:

- 1) համայնքի ղեկավարը նախաձեռնում է համայնքը պաշտոնական համացանցային կայրի, համացանցային որևէ սոցիալական կայրում խմբի կամ էջի կամ համացանցային և էլեկտրոնային որևէ միջոցի պատրաստման աշխատանքները.
- 2) համայնքի պաշտոնական համացանցային կայրը և համացանցային այլ միջոցները սպասարկու համայնքը աշխատակազմը համապատասխան մասնագետը՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, տեղադրու է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը.
- 3) համայնքի սպասարկու համացանցային կայրի, տարբեր համացանցային սոցիալական հարթակներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված համացանցային խմբերի և էջերի առկայության դեպքում, համայնքի աշխատակազմը կարող է առցանց /online/ ռեժիմով պատասխանել ընակիցներին հոգող հարցերին, իրականացնել հարցումներ, համայնքային բաց լումներ և (կամ) ըննարկումներ և ընակիցների մասնակցության այլ ձևեր:

57. Համայնքի սպասարկու համացանցային կայրի առկայության դեպքում, կայրում տեղադրություն է՝

- 1) տեղական ինքնակառավարմանն առնչվող հրմնական օրենքները և կառավարության որոշումները կամ դրանց հղումները.
- 2) համայնքի ավագանու և ղեկավարի բոլոր որոշումները կամ դրանց հղումները.
- 3) ավագանու նիստորի ընտրուկները և ընկայացվող բոլոր նախագծերը.
- 4) համայնքի մեռարելյայ կուտաբիած ուսումնահրարությունների, վերլուծությունների և գործագիտական աշխատանքների, արդյունքների վերաբերյալ գեկույցները.

- 5) թարմացվող օրացույց, որտեղ ներկայացվում են օրենսդրության հետ կապված վերջնաժամկետները (օրինակ, տօղական հարթերի, տուրքերի և վճարների վճարման) և համայնքային կարևոր մշտական ժամանակացույցը;
- 6) այլ տեղեկատվություն՝ բայ հայեցողության և նպատակահարմարության:

#### IV. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևի ընտրությունը և ժամկետները

**58.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևի (եղանակի) ընտրությունը կախված է նրանից, թե տեղական ինքնակառավարման մարմիններին ինչ նպատակներ են հետապնդում: Բնակիչների մասնակցության ձևերի կիրառման նպատակներից են՝

- 1) տեղեկացնելով բնակիչներին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին, որպեսզի նրանք մասնակցեն տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացներին և/կամ իրազեկ ինեն համայնքի կառավարման և գարգացման գործընթացներին;
- 2) կրթել բնակիչներին, որպեսզի նրանք ավելի խելամուռորեն վերաբերվեն տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնություններին և կարողանան գնահատել համայնքային խնդիրների լուծման այլընտրանքների առավելություններն ու թերությունները;
- 3) հայցել տեղեկատվություն բնակիչներից, որպեսզի ընդունվի տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվության աղյուսների շրջանակը;
- 4) խորհրդակցել բնակիչների հետ, որպեսզի պարզվի նրանց կարծիքը տեղական ինքնակառավարման մարմինները նոր նախաձեռնությունների վերաբերյալ;
- 5) ներգրավել բնակիչներին համայնքի պյանավորման և բյուջեավարման գործընթացներում՝ նրանց մասնակցությունը համայնքի ապագա տեսլականների, ուսումնառությունների, ծրագրերի և բյուջեների մշակմանը ապահովելու նպատակով;
- 6) ապահովել հետադարձ կապ բնակիչների հետ, որպեսզի պարզվի տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությունների սոցիալական ազդեցությունը բնակիչների վրա և ճշովեն տեղական ինքնակառավարման մարմինների հետագա գործողությունները;
- 7) ներգրավել բնակիչներին տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացում՝ ապահովելով նրանց ուղղակի մասնակցությունը տարբեր խորհրդակցական մարմիններում, հանձնաժողովներում, աշխատանքային խմբերում և այլն:

**59.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևի ընտրությունը սահմանում է համայնքում ընկալիսայից:

**60.** Համայնքի բնակիչները, համայնքում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչները կարող են առարկություններ և առաջարկություններ ներևայացնել համայնքի դեկավարին՝ տեղական նշանակության որևէ ուսուցիչ կամ իրավական ակտի նախագծի. բնակիչների մասնակցության ձևը ընտրության վերաբերյալ:

**61.** Համայնքի լրամբարձ՝ ծառթական տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ծնի ընտրության վերաբերյալ ստացված գրանոր առարկությանը կամ առաջարկությանը, Յ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանում է առարկություն կամ առաջարեւություն ներկայացնողին՝ իր կողմից դրա ընդունվելու կամ չընդունվելու մասին:

**62.** Առարևո բարեկարգությունը չընդունվելու դեպքում, համայնքի ղեկավարը առարկություն կամ առաջարկություն ներկայացնողին ներկայացնում է նաև չընդունման հիմնավորումը:

#### **Վ. Մասնակցության կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, դրա գործողության դադարումը**

**63.** Սույն կարգը վերանայվում է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում Հայատանի Հանրապետության օրենսդրությունում կատարված էական փոփոխությունների և (կամ) լրացումների, մասնակցության նոր ծներ կիրառելու անհրաժեշտության դեպքերում: Մասնակցության կարգի մեջ փոփոխությունները և (կամ) լրացումների կատարումը, դրա գործողության դադարեցումը իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ, համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

#### **Եզրափակիչ դրույթներ**

**64.** Սույն կարգը սահմանում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ընդհանուր կանոններն ու դրույթները: Համայնքում բնակիչների մասնակցության կոնկրետ գործընթացները հիմնվում են սույն կարգի վրա, ինչպես նաև կարող են ճշակել և ընդունվել բնակիչների մասնակցության կոնկրետ ծները կանոնակարգող հատուկ կարգեր, որտեղ մանրամասն կնկարագրվեն բնակիչների մասնակցության որոշակի գործընթացների կառույցակարգությունը և ընթացակարգերը:

**65.** Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կոնկրետ ծները կանոնակարգող հատուկ կարգերի նախագծեր, բացի տեղական ինքնակառավարման մարմիններից, կարող են ճշակել և տեղական ինքնակառավարման մարմինների ընարեւմանը և ուսումնառության ներկայացնել նաև համայնքի բնակիչները, քաղաքացիության ստորագրություն և ճամփարկոր համակարգի կազմակերպությունները և ոչ ֆորմալ խմբերը:

*Դիմութեալ Խ. Աղաջանյան*  *Դ. Աղաջանյան*